ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Ինչպե՞ս սկսել սպանդանոցների կառուցման գործընթացը

- Դիմել համայնքապետարան՝ ստանալու սպանդանոցի նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք («Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշում, գլուխ V):
- Տնտեսավարողը Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՍԱՏՄ) մարզային կենտրոն դիմում է ներկայացնում տվյալ տարածքում սպանդանոցային գործունեություն իրականացնելու համար:
- Նախագծման թույլտվությունը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը ստանալուց հետո տնտեսավարողը նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով դիմում է նախագծողին (19.03.2015թ. 596-Ն որոշում, կետ 72) *:
- Նախագիծը ստանալուց հետո տնտեսավարողը այն համաձայնեցնում է ՍԱՏՄ-ի հետ և դիմում է համայնքի ղեկավարին՝ նախագծային փաստաթղթերը համաձայնեցնելու և շինարարության թույլտվություն ստանալու նպատակով (19.03.2015թ. 596-Ն որոշում, կետ 98):
- Շինարարական աշխատանքները սկսելիս՝ տնտեսավարողը հրավիրում է սպանդանոցային գործունեությանն աջակցող ՍԱՏՄ մարզային կենտրոնի աշխատանքային խմբին սպանդանոց՝ տեղում խորհրդատվություն ստանալու նպատակով:
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո տնտեսավարողը դիմում է ՍԱՏՄ սահմանված պահանջների համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու համար, այնուհետև դիմում է համայնքի ղեկավարին՝ ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) ստանալու նպատակով (19.03.2015թ. 596-Ն որոշում, կետ 139):
- Կառուցված շինության շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը փաստագրվում են ավարտական ակտով (շահագործման թույլտվությամբ)՝ համաձայն N 5 հավելվածի N 3-1 ձևի, հաստատված նախագծով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո (19.03.2015թ. 596-Ն որոշում, կետ 138):
- Շինարարությունն ավարտելուց հետո գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նպատակով տնտեսավարողը սահմանված կարգով դիմում է Կադաստրի կոմիտեի որևէ սպասարկման գրասենյակ՝ անկախ գույքի գտնվելու վայրից:
- Բոլոր գործողությունների ավարտից հետո տնտեսավարողը գրանցվում է ՍԱՏՄ ռեեստրում, ստանում է անհատական նույնականացման համարանիշ և սկսում է իր տնտեսական գործունեությունը: Սպանդանոցի անասնաբույժը վերապատրաստման դասընթացներ է անցնում ՍԱՏՄ անասնաբուժության վարչությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ սահմանված N 5 ձևի անասնաբուժական վկայականի տրամադրման միասնական համակարգին տիրապետելու և դրանով աշխատելու նպատակով:

* Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված կարգով, մասնավորապես, օրական 500 գլուխ և ավելի հզորություն, ինչպես նաև օրական 50 տոննա և ավելի մսի արտադրություն ունեցող սպանդանոցների նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության,

Գոյություն ունեցող, վերակառուցվող կամ կիսակառույց սպանդանոցների շինարարական աշխատանքների դեպքում, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության 2015 թվականի մարտի 15-ի N 274 որոշմամբ սահմանված կարգով շենքի վերաբերյալ տեխնիկական եզրակացության ստացում:

Ինչպե՞ս կառուցել սպանդանոց օգտվելով պետական աջակցության գործիքակազմից

- ✓ Սպանդանոց կառուցելու համար անհրաժեշտ է սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայական: Սպանդանոցի զբաղեցրած կամ կառուցման համար նախատեսված հողամասի նպատակային նշանակությունը պետք է լինի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*:
- ✓ Տնտեսավարողը ՍԱՏՄ մարզային կենտրոն դիմում է ներկայացնում տվյալ տարածքում սպանդանոցային գործունեություն իրականացնելու համար:
- ✓ ՍԱՏՄ տեսուչը տարածքի զննումից հետո տալիս է տեղեկատվություն գործող նորմերին տարածքի համապատասխանության վերաբերյալ:
- ✓ Տնտեսավարողին ՍԱՏՄ-ի կողմից տրամադրվում է սպանդանոցային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության պահանջները և սպանդանոցների հատակագծերը:
- ✓ Տնտեսավարողը դիմում է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ տվյալ տարածքում սպանդանոց կառուցելու ու շահագործելու նպատակահարմարության (տվյալ տարածաշրջանում առկա անասնագլխաքանակ, գործող ու կառուցվող սպանդանոցների արտադրական հզորություններ, նոր սպանդանոցների կառուցման պահանջարկ) և պետական աջակցության ծրագրերի պայմանների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և պարզաբանումներ ստանալու համար:
- ✓ Տնտեսավարողը դիմում է ծրագրերին մասնակից ֆինանսական կառույցներից որևէ մեկին:

Պետական աջակցության գործիքներն են՝

- «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր
- «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր
- «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր

*Կառուցապատվող հողամասի գործառնական և (կամ) նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշումներով սահմանված կարգով՝ կախված տվյալ համայնքի գլխավոր հատակագծի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Սպանդանոցի կառուցման, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցների, սարքավորումների, մսեղիքի և կենդանի կենդանիների տեղափոխման միջոցների ձեռքբերման նպատակով տնտեսավարողները կարող են օգտվել պետական աջակցության հետևյալ ծրագրերից

(սպանդանոց կառուցելու համար սպանդանոցի նախագիծը և անասնաբուժասանիտարական պայմանները տնտեսվարողը համաձայնեցնում է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ)

«Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր

•Ծրագրի շրջանակներում սպանդանոցների կառուցման, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներ ինչպես նաև սպանդանոցային սարքավորումներ ձեռք բերելու համար տնտեսավարողը՝

•**Քայլ 1**. ընտրում է սարքավորումը և(կամ) շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցը և(կամ) մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցը, այն արտադրողին կամ մատակարարին,

•**Քայլ 2.** անհրաժեշտ փաստաթղթերով դիմում է հետևյալ ֆինասական կառույցներից որևէ մեկին՝

•«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,

•«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ,

•«Քարդ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,

•«Արմսվիսբանկ» ՓԲԸ,

•«Կոնվերսբանկ» ՓԲԸ,

• «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,

• «Ամերիաբանկ» ՓԲԸ,

•«Արմենիա լիզինգ քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր

•Ծրագրի շրջանակներում սպանդանոցների կառուցման և սարքավորումների ձեռքբերման համար տնտեսավարողը՝

•**Քայլ 1**.դիմում է ֆինանսական կառույցներից որևէ մեկին՝

•«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,

• «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ,

• «Կոնվերս բանկ» ՓԲԸ,

• «Քարդ ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,

• «Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ,

•«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ,

• «Անիվ» ՈՒՎԿ ՓԲԸ,

•«Ագրոլիզինգ» ԼՎԿ ՍՊԸ,

• «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,

•«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,

•**Քայլ 2.** ֆինանսական կառույցը հայտի վերաբերյալ տեղեկացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որը կազմակերպում է դասընթաց և տրամադրում է հավաստագիր,

•**Քայլ 3.** հավաստագրով ներկայանում է ֆինանսական կառույց:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր

•Ծրագրի շրջանակներում կենդանի կենդանիների տեղափոխման տրանսպորտային միջոց ձեռք բերելու համար տնտեսավարողը՝

•**Քայլ 1.** Ընտրում է կենդանի կենդանիների տեղափոխման տրանսպորտային միջոցի տեսակը, այն արտադրողին կամ մատակարարին,

•**Քայլ 2**. անհրաժեշտ փաստաթղթերով դիմում է հետևյալ ֆինանսական կառույցներից որևէ մեկին՝

• «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,

•«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ,

• «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,

Ինչպե՞ս ձեռք բերել մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոց

Պետական աջակցությամբ գործող ծրագրերի շրջանակում տնտեսավարողը կարող է օգտվել «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրից, որի շրջանակներում քայլերի հաջորդականությունը կլինի հետևյալը՝

- ընտրել մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցը, այն արտադրողին կամ մատակարարին,
- դիմել հետևյալ ֆինասական կառույցներից որևէ մեկին՝
  - «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,
  - «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ,
  - «Քարդ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,
  - «Արմսվիսբանկ» ՓԲԸ,
  - «Կոնվերսբանկ» ՓԲԸ,
  - «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
  - «Ամերիաբանկ» ՓԲԸ,
  - «Արմենիա լիզինգ քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ:

Ծրագրի պայմաններն են՝

- ✓ մինչև 8 տարի ներառյալ մարման ժամկետ,
- ✓ լիզինգի տարեկան տոկոսադրույքը՝ 4 տոկոս,
- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքը կկազմի 0 տոկոս,
- ✓ մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 3 ամիս,
- ✓ լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար,
- ✓ ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը,
- ✓ ծրագրի շրջանակներում մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոց կարող են ձեռք բերել միայն սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողները:

- Մինչ մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցի շահագործումը տնտեսավարողը դիմում է ՍԱՏՄ՝ «Սանիտարական անձնագիր» ձեռք բերելու համար:

Ինչպե՞ս ձեռք բերել շարժական և *շարժական մոդուլային սպանդանոց կամ սպանդանոցի հավաքովի կառուցվածք (կոնստրուկցիա) և սարքավորումներ*

Պետական աջակցությամբ գործող ծրագրերի շրջանակում տնտեսավարողը կարող է օգտվել «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրից, որի շրջանակներում քայլերի հաջորդականությունը կլինի հետևյալը՝

- դիմել ՍԱՏՄ շարժական և շարժական մոդուլային սպանդանոց, հավաքովի կառուցվածքով (կոնստրուկցիայով) սպանդանոցներին ներկայացվող պահանջներին ծանոթանալու համար,
- ընտրել շարժական և շարժական մոդուլային, հավաքովի կառուցվածքով (կոնստրուկցիայով) սպանդանոցների և սարքավորումների տեսակը, այն արտադրողին կամ մատակարարին,
- դիմել հետևյալ ֆինասական կառույցներից որևէ մեկին՝
  - «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,
  - «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ,
  - «Քարդ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,
  - «Արմսվիսբանկ» ՓԲԸ,
  - «Կոնվերսբանկ» ՓԲԸ,
  - «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
  - «Ամերիաբանկ» ՓԲԸ,
  - «Արմենիա լիզինգ քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ:

Ծրագրի պայմաններն են՝

- ✓ մինչև 8 տարի ներառյալ մարման ժամկետ,
- ✓ լիզինգի տարեկան տոկոսադրույքը՝ 4 տոկոս,
- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքը կկազմի 0 տոկոս,
- ✓ մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 3 ամիս,
- ✓ լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար,
- ✓ Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը:

- Շարժական սպանդանոցը գրանցվում է ՍԱՏՄ-ի կողմից վարվող «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ սահմանված N 5 ձևի անասնաբուժական վկայականի տրամադրման և շրջանառության նպատակով:
- Սպանդանոցի անասնաբույժը վերապատրաստման դասընթացներ է անցնում ՍԱՏՄ անասնաբուժության վարչությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ սահմանված N 5 ձևի անասնաբուժական վկայականի տրամադրման միասնական համակարգին տիրապետելու և դրանով աշխատելու նպատակով:
- Բոլոր գործողությունների ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը գրանցվում է ՍԱՏՄ ռեեստրում, ստանում է անհատական նույնականացման համարանիշ և սկսում է իր տնտեսական գործունեությունը:

Ինչպե՞ս ձեռք բերել կենդանի կենդանիների տեղափոխման տրանսպորտային միջոց

Պետական աջակցությամբ գործող ծրագրերի շրջանակում տնտեսավարողը կարող է օգտվել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրից, որի շրջանակներում քայլերի հաջորդականությունը կլինի հետևյալը՝

- Ընտրում է կենդանի կենդանիների տեղափոխման տրանսպորտային միջոցի տեսակը, այն արտադրողին կամ մատակարարին,
- անհրաժեշտ փաստաթղթերով դիմում է հետևյալ ֆինանսական կառույցներից որևէ մեկին՝
  - «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,
  - «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ,
  - «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ:

Ծրագրի պայմաններն են՝

- ✓ 3 տարի մարման ժամկետ,
- ✓ լիզինգի տարեկան մինչև 9 % տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 2 տոկոս,
- ✓ լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20%-ի չափով կանխավճար,
- ✓ արտոնյալ ժամկետ՝ տարեկան մինչև 6 ամիս,
- ✓ ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը 1 լիզինգառուի կողմից չպետք է գերազանցի՝ 200 մլն դրամը:

- Ծրագրի շրջանակներում կենդանի կենդանիների տեղափոխման տրանսպորտային միջոց կարող են ձեռք բերել միայն սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողները:

Ինչպե՞ս «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում կառուցել ամբողջական սպանդանոց՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով

- Տնտեսավարողը և կապալառուն ֆինանսական կառույցի մասնակցությամբ քննարկում են սպանդանոցի չափերը, օգտագործվող նյութերը, սարքավորումների քանակն ու տեսակը, սպանդանոցի արտադրողականությունը, ինչի հիման վրա կապալառուն ներկայացնում է սպանդանոցի արժեքը:
- Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին, որի հիման վրա իրականացվում է վարկային պատմության ուսումնասիրություն, ինչպես նաև ստուգվում է տնտեսավարողի կամ ծրագրի նախաձեռնողների հնարավոր ներգրավվածությունը դատական գործընթացներում, որոնք կարող են ազդեցություն ունենալ ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ կատարման վրա, միևնույն ժամանակ ֆինանսական կառույցը համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի» ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումը ստանալու նպատակով նախարարություն է ներկայացնում Կապալառու ընկերության անվանումը, պետռեգիստրի վկայականը և արտոնագիրը, սպանդանոցի տեղակայման վայրը, չափերը, օգտագործվող նյութերը, սարքավորումների քանակն ու տեսակը, արտադրողականությունը և սպանդանոցի արժեքը:
- Ներկայացված սպանդանոցի արժեքը, ինչպես նաև տեխնիկական չափանիշները տնտեսավարողին բավարարելու դեպքում՝ ֆինանսական կառույցը իրականացնում է վարկունակության, վարկարժանության, ինչպես նաև ծրագրի իրատեսականության գնահատում:
- Դրական որոշման դեպքում՝ կնքվում է հողամասի, որի վրա կառուցվելու է սպանդանոցը, ֆինանսական կառույցին անհատույց օգտագործման և գրավի, երաշխավորության պայմանագրեր (ծրագրի նախաձեռնողների կողմից որպես պարտավորությունների ապահովման միջոց տրվում են անձնական երաշխավորություններ), ինչպես նաև լիզինգի պայմանագիր, որի հիման վրա տնտեսավարողը վճարում է կանխավճար սպանդանոցի արժեքի 20%-ի չափով:
- Ֆինանսական կառույցիը համայնքից ստանում է շինթույլտվություն, անհրաժեշտության դեպքում կատարվում է հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություն, որը կատարվում է համայնքի ղեկավարի կամ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:
- Ֆինանսական կառույցի, տնտեսավարողի և կապալառուի միջև կնքվում է եռակողմ կապալի պայմանագիր, որով սահմանվում է սպանդանոցի կառուցման և հանձնման ժամկետները, ինչպես նաև կապալառուին վճարման ժամանակացույցը:
- Կառուցումից և սարքավորումներով համալրումից հետո իրականացվում է ֆինանսական կառույցի սեփականության, ինչպես նաև տնտեսավարողի լիզինգի իրավունքների գրանցում:
- Հանձնման ընդունման ակտով սպանդանոցը հանձնվում է տնտեսավարողին «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի» շրջանակներում հետևյալ պայմաններով՝ տարեկան 4 % տոկոսադրույքով, իսկ սահմանամերձ համայնքներում գործունեություն ծավալողների համար՝ 0 % տոկոսադրույքով, լիզինգի ժամկետը՝ մինչև 8 տարի, ֆինանսական կառույցը իր հաշվին կատարում է սպանդանոցի և սարքավորումների ամբողջական ապահովագրություն՝ լիզինգի գործողության ամբողջ ժամանակահատվածում կորստյան և վնասվածքի ռիսկերից:
- Բոլոր գործողությունների ավարտից հետո տնտեսավարողը գրանցվում է ՍԱՏՄ ռեեստրում, ստանում է անհատական նույնականացման համարանիշ և սկսում է իր տնտեսական գործունեությունը:
- Սպանդանոցի անասնաբույժը վերապատրաստման դասընթացներ է անցնում ՍԱՏՄ անասնաբուժության վարչությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ սահմանված N 5 ձևի անասնաբուժական վկայականի տրամադրման միասնական համակարգին տիրապետելու և դրանով աշխատելու նպատակով: